



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N_146

Տուգանք նշանակելու մասին

12.05.2021թ.

ք. Երևան

Քննելով տեսչական մարմնի կողմից 2021թ. ապրիլի 15-ի N_183-Ա հրամանով
«ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍԻ ԲԱԼՅԱՆ» Ա/Ձ-ում կատարված
Տնտեսվարող սուբյեկտի անվանումը

ստուգման նյութերը (ստուգման ակտ N_183-Ա կազմված 11.05.2021թ.,
խախտումների մասին 19.04.2021թ. արձանագրությունը և այլ նյութերը), որոնցով
բացահայտվել է, որ՝

Ա/Ձ-ն իրականացնում է սեղմված բնական գազի /ԱԳԼՃԿ/ մանրածախ վաճառք:
Ստուգման արդյունքում պարզվել է, որ բնական գազի կոմպրեսացված վառելիքի
լիցքավորման բաշխիչ աշտարակների էլեկտրոնային հանգույցի գազի ճնշման
ցուցմունքները լիցքավորման ավարտին գերազանցել են տեխնիկական
կանոնակարգով սահմանված 19.6 ՄՊա-ը՝ հասնելով 23 ՄՊա-ի: Միաժամանակ
պարզվել է, որ խախտվել են վառելիքաբաշխիչ աշտարակների միջստուգաչափման
ժամկետները՝ մասնավորապես 01.02.2019թ.-ից մինչև 13.12.2019թ.-ը և 13.12.2020թ.-
ից մինչև ստուգման պահը ընկած ժամանակահատվածում շահագործվել են առանց
ստուգվաչափման:

Փաստացի խախտվել են «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի
27-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հափումների միասնականության ապահովման
մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 2008թ.
օգոստոսի 28-ի N1101-Ն որոշմամբ հաստատված «Ավտոգազալիցքավորման

ճնշակայանների /ԱԳԼՃԿ/ կառուցման և շահագործման նվազագույն պահանջների»
տեխնիկական կանոնակարգի 87-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

Կատարված իրավախախտման հանգամանքները և խախտման էությունը

Նշված իրավախախտման համար պատասխանատու է՝

Արմեն Ավետիսի Բալյանը

իրավախախտողի անունը, ազգանունը, պաշտոնը

ՀՀ Արարատի մարզ ք.Արարատ Արովյան 1 բն.33

մշտական բնակավայրը և հասցե

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի
Հանրապետության օրենսգրքի 244 պրիմ 7 հոդվածով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Տվյալ իրավախախտման համար պատասխանատու ճանաչել Արմեն Բալյանին
և կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի
Հանրապետության օրենսգրքի 158 հոդվածի 3-րդ և 23-րդ մասերով նախատեսված
պատասխանատվության միջոցները, սահմանել տուգանք՝ համապատասխանաբար
100.000 /հարյուր հազար/ և 100.000 /հարյուր հազար/, ընդհանուր՝ 200.000 /երկու
հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

2.Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305
հոդվածի՝ տուգանքը պետք է վճարվի **Պետական բյուջե 900005024014 հ/հ**
տուգանք նշանակելու մասին որոշումը իրավախախտողին հանձնելու օրվանից ոչ ուշ,
քան 15 օրվա ընթացքում:

3.Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում
է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ
բաժնի դրույթներին համապատասխան:

4.Տուգանքը սահմանված ժամկետում վճարելուց հետո բանկային կտրոնի
պատճենը անհրաժեշտ է 3 օրվա ընթացքում ներկայացնել տեսչական մարմնին՝ ք.
Երևան, Կոմիտասի 49/2 հասցեով:

5.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա
ընթացքում Վարչական դատարան:

Տեսչական մարմնի ղեկավար՝



Արմեն Կոտոյան

570/21-8